



«Ճանաչիր ինքդ քեզ, երբ դեռ երիտասարդ ես»:

Մա 1920-ական թվականներին Փարիզում հիմնադրված Փարիզի համալսարանական միջազգային ավան (ՓՀՄԱ) հիմնադրամի կարգախոսն էր:

Այսօր էլ 2012-ին նմանատիպ տեսլական ունենք մենք. Կոպենհագենում հիմնադրել համալսարանական միջազգային ավան, գրեթե քաղաքի կենտրոնում՝ Օրեստադենի Սոնբյու մետրոյի կայարանի շրջակայքում (Sundby Metro St., Ørestaden):

Կոպենհագենյան ավանը սենյակներ է առաջարկում 5000 ուսանողների համար եւ ինչպես և ՓՀՄԱ-ը՝ նախատեսված է մշակութային միջազգային միջոցառումների համար: Նման մեծության միջազգային ուսանողական ավանը մեծապես կնպաստի, որ Կոպենհագենը Եվրոպայի քարտեզի վրա դիտարկվի որպես հայտնի համալսարանական մայրաքաղաքներից մեկը:

2012թ. դրությամբ Դանիայում կա մոտ 18000 օտարերկրյա ուսանող, որոնցից մեծ մասը սովորում են Կոպենհագենում: Վիճակագրության համաձայն՝ Դանիայում սովորում են 2500 ուսանող Նորվեգիայից, 1800՝ Շվեդիայից, 1500՝ Գերմանիայից, 1500՝ Բալթյան երկրներից, 1300՝ Ռումինիայից և Բուլղարիայից, 1300՝ Չինաստանից, 1300՝ Իսլանդիայից եւ Ֆինլանդիայից, 800՝ Լեհաստանից և այլն:

Կարևոր առանձնահատկությունն այն է, որ այս նոր ուսանողական ավանը գտնվում է Կոպենհագենի համեմատաբար կենտրոնական մասում և շատ մոտ է մետրոյի ու գնացքի կայարաններին: Ուսանողական ավանի տարածքը բավականաչափ մեծ է և հետագա 25-50 տարիների ընթացքում հնարավորություն ունի ընդլայնվելու:

Կոպենհագեն քաղաքի կանխատեսումների համաձայն՝ երիտասարդների և ուսանողների քանակը կաճի 25-30%-ով և 2025թ. դրությամբ կհասնի 168000-ի՝ ներառյալ օտարերկրյա ուսանողները:

Բայց որտե՞ղ պետք է ապրեն նրանք:

Որտե՞ղ պետք է սնվեն:

Որտե՞ղ պետք է հավաքվեն:

Կոպենհագենի միջազգային ուսանողական ավանը պատրաստ է տալու նմանատիպ հարցերի պատասխանները: